

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՌԴ-ի աջակցությամբ իրականացվող Հայկական ԱԷԿ-ի № 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման ծրագրի վերաբերյալ

Ծրագրի շրջանակներում կնքվել են.

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայկական ատոմային էլեկտրակայանի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման հարցում համագործակցության մասին համաձայնագիր:

Համաձայնագրի ստորագրման ամսաթիվը՝ 20.12.2014թ.

Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 05.05.2015թ.

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ատոմային էլեկտրակայանի շահագործման ժամկետի երկարաձգման աշխատանքների ֆինանսավորման համար Հայաստանի Հանրապետության կառավարությանը պետական արտահանման վարկ տրամադրելու մասին համաձայնագիր:

Համաձայնագրի ստորագրման ամսաթիվը՝ 05.02.2015թ.

Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 05.05.2015թ.

Համաձայնագրով նախատեսված գումարը՝ 300 մլն ԱՄՆ դոլար, որից՝ 270 մլն ԱՄՆ դոլարը վարկ և 30 մլն ԱՄՆ դոլարը որպես դրամաշնորհ:

Համաձայնագրով նախատեսված տոկոսադրույքի չափը՝ 3% տարեկան և կոմիսիոն վճար՝ վարկի չօգտագործված գումարի 1% չափով:

Համաձայնագրի փակման ամսաթիվը՝ 31.12.2019թ.

Համաձայնագրով նախատեսված վարկի մարման սկիզբը և ավարտը՝ 15.01.2020թ.– 15.07.2029թ.

Ըստ համաձայնագրի տրամադրված վարկային (դրամաշնորհային) ծրագրի անվանումը՝ ՌԴ-ի աջակցությամբ իրականացվող Հայկական ԱԷԿ-ի №2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման ծրագիր

Ծրագրի նպատակը և ակնկալվող արդյունքները.

Հաշվի առնելով, որ ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցումը հետաձգվում է, խիստ անհրաժեշտություն է առաջացրել երկարացնելու գործող էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետը, այլապես հնարավոր է, որ ոչ միայն ներքին սպառման շուկայում այլ նաև տարածաշրջանային էներգափոխանակման հարցերում առաջանան տնտեսապես ոչ շահավետ պայմաններ: Հայկական ատոմային էլեկտրակայանի (ՀԱԷԿ) գործող էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետը՝ համաձայն ՀՀ ԿԱ միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի կողմից տրամադրված շահագործման լիցենզիայի ավարտվում է 2016թ.:

Համաձայն ՀՀ Նախագահի 2013թ. հոկտեմբերի 23-ի թիվ 182-ՆԿ «Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգը հաստատելու մասին» կարգադրության հավելվածի 3.2 «Հայեցակարգի ենթանպատակները» և 8.4 «Ատոմային էներգետիկայի զարգացումը» բաժինների, ՀԱԷԿ-ը կշահագործվի մինչև այն պահը, երբ հնարավոր կլինի այն փոխարինել նոր ատոմային էներգաբլոկով և դուրս կբերվի շահագործումից՝ առանց տնտեսական, սոցիալական, բնապահպանական և էներգետիկ բնույթի բացասական հետևանքների: ՀԱԷԿ-ի անվտանգ շահագործումն ապահովելու և լրացուցիչ ժամկետում շահագործման լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է իրականացնել ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման ծրագրում նշված աշխատանքները՝ ամբողջ ծավալով և համապատասխան ժամկետներում: ՀԱԷԿ-ի շահագործման նախագծային ժամկետի երկարացման լիցենզիա ստանալու համար աշխատանքների իրականացման հետաձգումը, շահագործման ժամկետի ավարտին կբերի ՀԱԷԿ-ի պարտադրված կանգառի և այդ ժամանակահատվածում ՀՀ-ում կառաջանա էլեկտրական էներգիայի արտադրության պակասորդ:

Ծրագրի շրջանակներում կնքված պայմանագրերը.

ՀՀ ֆինանսների նախարարության և «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ միջև 22.06.2015թ. կնքվել է թիվ 6/2015 ենթավարկային պայմանագիրը, ինչպես նաև 22.06.2016թ. կնքվել է թիվ 6/2015 ենթավարկային պայմանագրում փոփոխություն կատարելու մասին ենթավարկային պայմանագրի թիվ 1 փոփոխությունը, որոնք ուժի մեջ են մտել ստորագրման պահից, վարկը և վարկից համաֆինանսավորումը (այսուհետ՝ ենթավարկ) «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ին տրամադրվել է 15 տարի մարման ժամկետով, տարեկան 3% տոկոսադրույքով:

Ենթավարկի օգտագործումը՝ 2015-2019թթ.

Ենթավարկի մարումը՝ 2020-2029թթ., հավասար չափերով, յուրաքանչյուր տարվա հունվարի 10-ին և հուլիսի 10-ին՝ սկսած 2020թ-ի հունվարի 10-ից և ավարտված 2029թ-ի հուլիսի 10-ով: Ենթավարկի տոկոսագումարների վճարումը յուրաքանչյուր տարվա հունվարի 10-ին և հուլիսի 10-ին:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (Պատվիրատու) և «Ռուսատոմ Սերվիս» ԲԸ-ի (Կապալառու) միջև 2015թ. հունիսի 1-ին ստորագրվել է «Հայկական ատոմային էլեկտրակայանի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման աշխատանքների իրականացում, ծառայությունների մատուցում և ապրանքների մատակարարում» №309/688-Ճ պայմանագիր (այսուհետ՝ Շրջանակային պայմանագիր):

Ծրագրի խորհրդատուի անվանումը՝ «Ռուսատոմ Սերվիս» ԲԸ:

Խորհրդատուի պայմանագրի անվանումը՝ Լրացուցիչ համաձայնագիր №1 առ 01.06.2015թ. «Հայկական ատոմային էլեկտրակայանի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրի կառավարում»:

Խորհրդատուի պայմանագրի գումարը՝ 30 մլն ԱՄՆ դոլար, որից 27 մլն ԱՄՆ դոլար – վարկային միջոցների հաշվին, 3 մլն ԱՄՆ դոլար – դրամաշնորհային միջոցների հաշվին:

Խորհրդատուի պայմանագրի ստորագրման ամսաթիվը՝ 01.06.2015թ.

Խորհրդատուի պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 01.06.2015թ.

Խորհրդատուի պայմանագրի սկիզբը և ավարտը՝ 01.06.2015թ. - 31.12.2019թ.

Ծրագրի կապալառուի անվանումը՝ «Ռուսատոմ Սերվիս» ԲԸ

Շրջանակային պայմանագրի շրջանակներում ստորագրվել են 83 լրացուցիչ համաձայնագրեր (այսուհետ՝ ԼՀ)՝ ընդհանուր 196.7 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ, ներառյալ ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 1-ի N°4-27 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած ծրագրի իրականացումն ապահովող թիվ 48 ԼՀ-ն՝ 57 117 520 ԱՄՆ դոլար արժողությամբ (թիվ 48 ԼՀ-ի շրջանակներում կնքվել են 11 Լրացումներ, որոնց գումարը կազմել է 36,577.7 հազ. ԱՄՆ դոլար), որից 194.3 մլն ԱՄՆ դոլարի ԼՀ-ները ընդունվել են ֆինանսավորման:

Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքները և վճարումները 31.12.2020թ. դրությամբ՝

Ծրագրի շրջանակներում իրականացվել են 192.9 մլն ԱՄՆ դոլարի աշխատանքներ և մասհանումներ, որից վարկային միջոցների հաշվին՝ 173.6 մլն ԱՄՆ դոլար, դրամաշնորհային միջոցների հաշվին՝ 19.3 մլն ԱՄՆ դոլար: Ծրագրի սկզբից կատարված փաստացի վճարումները վարկային միջոցներից կազմում են 170,7 մլն ԱՄՆ դոլար:

Ծրագրի շրջանակներում կնքված վարկային Համաձայնագրի ժամկետն ավարտվել է և չի երկարաձգվել: Ծրագիրն ավարտին հասցնելու համար ՀՀ Կառավարության 2020 թվականի հունիսի 11-ի թիվ 953-Ն որոշմամբ “ՀԱԷԿ” ՓԲԸ-ին 2020-2022թթ. ընթացքում ՀՀ պետական բյուջեից կհատկացվի 63,2 մլրդ ՀՀ դրամ գումարի չափով բյուջետային վարկ, որից 2020 թվականին հուլիսի 10-ին ՀՀ ֆինանսների նախարարության և «ՀԱԷԿ» ՓԲԸ միջև կնքվել է N8/2020 վարկային պայմանագիր 18,7 մլրդ ՀՀ դրամ գումարի չափով:

Ծրագիրն իրականացվում է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ կողմից: